

Մեզ իսկոյն շրջապատեցին մի խումբ արեղաներ, սկսեցին հարցուփորձ անել բժշկապետի մասին, թէ որտեղացի է նա, ուր է գնում, քանի լեզու գիտէ եւ այլն: Այդ հարցերի պատասխանը, որ անելի ինձ էր պատկանում տալ, տալիս էր մեր ընկեր Չալլադը: Որտեղի՞ց նա այնքան տեղեկութիւններ ուներ բժշկապետի մասին, այդ ինձ շատ անհասկանալի էր:

Երեկոյեան կաթողիկոսը վերադարձաւ շատ ուշ. նա հրամայեց Ասլանին իր մօտ կանչել: Ես եւ Չալլադը մնացինք մեր խուցի մէջ միայնակ: Ասլանը երկար մնաց վեհափառի մօտ, մինչեւ ճրագները վառեցին, մինչեւ գիշերից բաւական անցաւ: Ես պառկած էի մահճակալի վրայ եւ, այնօր տաճարում տեսած բարբարոսութիւնների տխուր տպաւորութեան ներքոյ, մտածում էի՝ եթէ անշունչ քարերի հետ այսպէս են վարուել, ապա որքա՞ն արէտներ, որքա՞ն տառապանքներ պետք է կրած լինեն մեր նախնիքը հայրենիքի թշնամիներից... Չալլադը լուռ նստած էր ճրագի մօտ եւ թերթում էր իր գտած մագաղաթները: Նա այն աստիճան խորասուզած էր իր գործի մէջ, որ, կարծես, իմ ներկայութիւնը չէր նկատում: Թերթերը դասաւորում էր, համեմատում էր միմեանց հետ եւ երբեմն երկար, աչքերը յառած, նայում էր միեւնոյն տողերի վրայ, որ ժամանակը եւ հնութիւնը եղծել էին:

– Ի՞նչ ազգի գրածք են, – հարցրի նրանից:

– Տառերը յունարէն են, իսկ լեզուն՝ հայերէն, – պատասխանեց նա, աչքերը չհեռացնելով իր ձեռքի թերթից:

– Ինչո՞ւ են յունարէն տառերով գրել:

– Կար մի ժամանակ, որ մենք սեփական տառեր չունէինք, գրում էինք յունաց, ասորոց եւ պարսից տառերով, մինչեւ Մեսրոպը մեզ համար տառեր հնարեց:

– Ուրեմն այդ ձեռագրերը այնքան հի՞ն են, որ մեր տառերի գիւտից էլ առաջ են:

– Այո՛, եւ այդ պատճառով էլ թանկագին են:

– Ի՞նչ է գրած:

– Դեռեւս դժուար է որոշել, թերթերը խառնուել են միմեանց: Բայց, ինչպէս երեւում է, այդ թերթերը երուր զանազան գրքերից են առնուած, մի մասը Նոր կտակարանի թարգմանութիւն է, միւս մասը՝ մի պատմական գրածք է:

– Դուք յունարէն կարդո՞ւմ եք:

– Կարդում եմ:

– Եւ լեզուն գիտե՞ք: